ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ 1639-1700 ԹԹ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. Գ.

XVI դ. սկզբից մինչև XVII դ. 30-ական թթ. վերջը, քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով, Հայաստանում գրեթե դադարել էր մշակութային կյանքի բնականոն զարգացումը: 1639 թ. Կասրի Շիրինի[1] պայմանագրի կնքումից հետո որոշակի առաջընթաց է նկատվում ճարտարապետության, կերպարվեստի, դեկորատիվ-կիրառական արվեստի տարբեր բնագավառներում:

Անդրադարձն այդ ժամանակաշրջանի Արցախի ճարտարապետական հուշարձանների պատմությանը գալիս է ապացուցելու երկրամասի արվեստի արժեքային համակարգի առկայությունը և ևս մեկ անգամ ժխտելու օտար պատմաբանների այն տեսակետները, թե այս տարածքի այս կամ այն մշակութային արժեքը պատկանում է որևէ օտար (հատկապես՝ պարսիկ, թուրք, հետագայում՝ ադրբեջանցի) էթնոսի:

Չնայած ներքին և արտաքին արգելակիչ գործոններին, Հայաստանում շարունակում են վերակառուցվել և ստեղծվել ճարտարապետական նոր կոթողներ: Իրենց ինքնատիպությամբ առանձնանում են XVII-XVIII դդ. Արցախի տարբեր վայրերում կառուցված եկեղեցիները: Ընդգծենք, որ հատկապես մելիքների տիրապետության շրջանում Արցախում (Ղարաբաղում) հիմնականում կառուցվում են բազիլիկ տիպի, առանց գմբեթի եկեղեցիներ:

Գանձասարի, Դադի վանքի (նաև՝ Դադոյի), Խաթրավանքի (նաև՝ Խադարի, Խադայի կամ Խադոյի), Գտչավանքի (հնում՝ Քթիշ, հետագայում՝ Կտիչ, Գտիչ, իսկ նոր ժամանակներում մելիքանիստ Տող գյուղի անունով՝ Տող), Ս. Հակոբի վանական համալիրներին զուգընթաց[2] 1639-1700 թթ.

---

[1] *XVI դ. սկզբներին սկսված թուրք-պարսկական բախումներն ավարտվեցին Կասր ի Շիրինի (Կասրե-Շիրին) հաշտության պայմանագրով: Հայաստանը կրկին երկատվեց. Պարսկաստանին անցան Հայաստանի արևելյան նահանգները՝ Գուգարքը, Շիրակը, Արշարունիքի մի մասը, Արարատյան դաշտը, Սյունիքն ու Արցախը, Վասպուրականի արևելյան հատվածը, Օսմանյան Թուրքիային՝ Հայաստանի արևմտյան տարածքները: Այդ ժամանակահատվածում Արցախի մելիքությունները, Գանձակի բեկլարբեկության կազմում գտնվելով պարսկական տիրապետության տակ, ունեին ներքին ինքնավարություն, որն էլ խթան դարձավ մշակութային արժեքների ստեղծման համար:*

[2] *Մանրամասն տե՛ս* **Բարխուտարեանց Մ.**, *Արցախ, Բաքու, 1895,* **Ոսկեան Հ.**, *Արցախի վանքերը, Վիեննա, 1953,* **Ալիշան Ղ.**, *Արցախ, Ե., 1993,* **Ուլուբաբյան Բ.**, *Արցախի պատմություն, Ե., 1994:*

Արցախում վերակառուցվեցին և կառուցվեցին բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ:

Իրենց հնատիպ առանձնահատկություններով աչքի են ընկնում ***Գյուլիստանի, Դրախտիկի, Թոդանի, Խաչակապի, Ավետարանոցի, Խաչմասի*** *եկեղեցիները:*

Գյուլիստանի *(հնում գյուղը Խաչեն գավառում էր, ներկայումս՝ Ադրբեջանի Հանրապետության Խանլարի շրջանում)* ***Ամենափրկիչ վանքը*** *կառուցվել է 1641 թ.: Այն գտնվում է գյուղից ոչ հեռու, դեպի հարավ-արևմուտք, Աղսու կոչված վտակի ձախ ափի մոտ, մի անտառապատ ձորակում: Վանքի մասին ուշագրավ հիշատակություն ունի Ե. Լալայանը. «Տաճարը շինուած է անտաշ քարով, չորս բոլորակ սիւների վրայ և ունի 23 մետր 50 սանտիմետր երկարութիւն և 10 մետր լայնութիւն: .... Միակ, հարաւային դուռը այժմ քաղուած է, այս պատճառով էլ տաճարը թուրքերի անասունների ապաստարան է դարձած: Աւազանի մօտ, որ նոյնպես կիսով չափ քանդուած է, կայ ՌՂ (1641) թուականը[3]«: Տաճարի արևմտյան կողմում եղել է երկու թաղակապ (կամարակապ, թաղա-ծածկ), որոնցից մեկի դռան վրա գրված է. «Թվ ՌՃԿԴ. յիշատակ է այս օթաղս Եղիա վարդապետին[4]«: Գյուլիստանի հնատիպ ճարտարապետական կոթողներից հայտնի է նաև* ***Ս. Մինաս կոչվող մատուռը,*** *որի հյուսիսային պատի վրա կար հետևյալ արձանագրությունը. «Կամաւ Աստուծոյ շինեցինք խորանս տանուտէրն Ուլուխան, աշխատողք երկու, տէր Դաւիթն, Սպարապետն, առ հասարակ ժողովուրդքն. թվ.:ՌՃԼ»(1659)[5]:*

Դրախտիկ գյուղի *(ներկայումս՝ ԼՂՀ-ի Հադրութի շրջանում)* ***Սբ.Գրիգոր Նարեկացի եկեղեցին*** *կառուցվել է 1645 թ., այդ մասին փորագրված է եղել եկեղեցու մուտքի ճակատաքարին:*

Թոդանի[6] եկեղեցու *արձանագրություններից մեկի համաձայն՝ եկեղեցին 1647 թ. կառուցել է Տեր Եղիասը իր կողակից Բեղադինի հոգու հիշատակի համար: Ղ. Ալիշանը հիշատակում է այդ արձանագրության մասին. «Աստծու կամքով ես՝ Տեր Եղիաս, շինեցի այս սուրբ եկեղեցին՝ Առտի բեգի որդի, իմ կողակից Բեղադինի հոգու հիշատակի համար, Շահ-բազի ժամանակ, Մութուղոլի խան Թաղուլդի իշխանութեան օրոք և Գան-ձասարի կաթողիկոս Տեր Գրիգորիսի կաթողիկոսութեան ժամանակ....»[7]:*

---

[3] **Լալայան Ե.,** *Նշանավոր վանքեր (Ազգագրական հանդես, գիրք Ե., Թիֆլիս, 1899, էջ 348):*

[4] *Նույն տեղում:*

[5] *Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), Ե., 1982, էջ 248:*

[6] *Ըստ Ղ. Ալիշանի՝ Թոդան գյուղը տեղադրված էր Խաչենի գառիթափ ձորում (Տե՛ս* **Ալիշան Ղ.,** *նշվ. աշխ., էջ 106): Ներկայումս այն մտնում է Ադրբեջանի Խանլարի շրջանի մեջ:*

[7] *Նույն տեղում:*

Խաչակապի[8] *(Խաչափակ, Ղուշչի) թաղակապ եկեղեցին կառուցվել է 1650 թ. (վերանորոգվել՝ 1864 թ.), իսկ* ***Ավետարանոցի*** *(Չանախչի)* ***Սբ. Աստվածածին եկեղեցին՝*** *1651 թ., որի մասին է վկայում եկեղեցու մուտքի բարավորի (դռնագլուխ, շեմագլուխ) վրա փորագրված արձանագրությունը:*

Խաչմաս գյուղի *(Մ. Բարխուտարյանցի աշխատության մեջ*[9]*՝ Խաչմաչ)* ***Սբ. Ստեփանոսի թաղակապ եկեղեցին*** *ունի փոքր զանգակատուն: Մուտքի բարավորի վրա փորագրվել էր 1 տող արձանագրություն, որում նշված էր եկեղեցու կառուցման թվականը՝ 1651 թ, (թվին ՌՃ): Եկեղեցու մուտքի արևելյան կողմի արձանագրության մեջ նշվում է, որ ուստա Հուսեփը ոմն Գևորգի հետ որպես հիշատակ կառուցել է այդ եկեղեցին, և տեսնողները թող ասեն՝ Աստված ողորմի*[10]*:*

Ճարտարապետական ինքնատիպությամբ առանձնանում է ***Շոշ***[11] ***գյուղի Սբ. Ստեփանոսի եկեղեցին՝*** *կառուցված 1655 թ: Այս մասին վկայում է եկեղեցու հյուսիսային մուտքի ճակատաքարի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «Փոքր ծոթով ուր գա... հասա քև տէր. ոտարք շինեցաք զսուրբ Ամենափրկիչ եկեղեցիս յիշատակ հոգոց մերոց և ննջեցելոց. ի հայրապետութեան Աղուանից տեառն Երեմիայի եւ ի մերոցս նահանգի աթոռն տէր Գրիգորն և տէր Դաւիթ եպիսկոպոսաց: Ես մեղաւորս տէր Դաւիթ էրեցս եղէ պատկառ. յիշեցէ՛ք ի տէր հանդերձ: ԺԵ: (15) քահանայիւ. զտէր Առաքել քահանայն յիշեցէք ի տէր. թվ.: ՌՃԴ: (1655) էր»: Յաղաւթս յիշեցէ՛ք: Տէր Յիսուս Քրիստոս Աստուած ողորմեա ննջեցելոցն*[12]*:*

---

[8] *Խաչակապ գյուղը եղել է պատմական Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդ-ման գավառում: Ներկայումս՝ Ադրբեջանի Դաշքեսանի շրջանում է: Գյուղի հայ բնակչությունը բռնագաղթել է 1988-1989 թթ.՝ Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականության հետևանքով: Մի ավանդազրույցի համաձայն՝ գյուղում կային մի քանի բարձր խաչարձաններ, որոնք կանգնեցրել է ս. Մեսրովբը, երբ Գարդմանի Խուրս իշխանի ձեռնտվությամբ վերացրել է կռապաշտության մնացորդները: Եվ ի հիշատակ այդ անցքի՝ գյուղը կոչվել է Խաչակապ կամ Խաչափակ: Ուշագրավ է նաև Ե. Լալայանի նշած ավանդությունը. Շահ Աբբասի արշավանքների ժամանակ այս գյուղից ոմն Գրիգոր բռնում է մի բազե՝ շահին ընծա տանելու համար, սակայն ճանապարհին ժայռից վայր է ընկնում և մեռնում: Շահ Աբբասը, լսելով այդ մասին, կամենում է այս գյուղը նվիրել նրա հորը, բայց վերջինս հրաժարվում է և խնդրում այն նվիրել համայնքին, որպեսզի միշտ իր հանգուցյալ որդուն ողորմի տան: Շահն էլ կատարում է նրա խնդրանքը և գյուղն էլ կոչում է Ղուշչի [տե՛ս* **Լալայան Ե.,** *Հայոց նշանավոր գյուղեր (Ազգագրական հանդես, գիրք Ե, էջ 313-314)]:*

[9] **Բարխուտարեանց Մ.,** *նշվ. աշխ., էջ 65:*

[10] *Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 159:*

[11] *Շոշ (նաև՝ Շուշիքենդ), գյուղը ներկայումս գտնվում է ԼՂՀ Ասկերանի շրջանում, Շուշի քաղաքից 4 կմ հարավ-արևելք: Ե. Լալայանը նշում է, որ գյուղի բնակիչների շատ քիչ մասն է բնիկ, շատերին Մելիք Բաղին Սոթից բերել և բնակեցրել է այստեղ, իսկ մի քանի գերդաստան էլ Ջրաբերդից են եկել (տե՛ս Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1897, գիրք Բ, էջ 33):*

[12] *Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 145-146:*

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախում եկեղեցաշինության ծավալման գործում մեծ է եղել Գանձասարի Պետրոս Խանձքեցի (Խանձկեցի, ծնվել է Վարանդա գավառի հյուսիսում գտնվող Խանձք[13] գյուղում) կաթողիկոսի (1653-1675[14]/1678[15] թթ.) դերը: Նա Գրիգոր Դ կաթողիկոսի վախճանվելուց հետո՝ 1653 թ. դառնում է Աղվանից կաթողիկոս: Ինչպես նշում է Մ. Բարխուդարյանը, «խոհեմափայլ կաթողիկոսը» նախ վերանորոգում է Աղվանքի և հայոց կաթողիկոսությունների միջև եղած հարաբերությունները՝ ձեռնադրվելով և օծվելով Ս. Էջմիածնում, ապա Աղվանքի հայ բնակչության սրտերում ջերմացնում է սերը Գանձասարի նկատմամբ, համախմբում Վարանդա գավառի ժողովրդին և շահական պալատում պաշտպանում Գանձասարի դարավոր իրավունքը[16]: Նրա ջանքերով կառուցվեցին Հերհեր գյուղի Սուրբ Գրիգորիս (1667), Խաչեն գավառի Առաջաձոր գյուղի Սուրբ Աստվածածին (1668), Հին Փիփի[17] գյուղի (1670), Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոս[18] (1673) եկեղեցիները:

Վարանդայի Հերհեր գյուղի Սբ. Գրիգորիս եկեղեցին[19] *(1667-1676 թթ., ներկայումս՝ ԼՂՀ Մարտունու շրջանում) կառուցվել է Պետրոս կաթողիկոսի կարգադրությամբ և Բարսեղ արքեպիկոպոսի ղեկավարությամբ: Այս փաստը հաստատում է եկեղեցու սեղանի ժողովրդահայաց երեսին փորագրված հետևյալ արձանագրությունը. «Կամաւն Աստծոյ ես Պետրոս Կաթողիկոս Աղուանից սուրբ աթոռոյ Գանձասարայ՝ նորոգեալ սուրբ աթոռս Ամարասայ արքեպիսկոպոսութեան բոլոր նահանգի Վարանդու եւ Քոչիզու, քանզի փեռեկտեալ եւ պատառեալ էին զվիճակ սորին արարեալ ըստ իւրաքանչիւր կամաց. իսկ մեք զցանկ հայրենի նորոգեալ ժողովեցաք, նորոգեցաք զսիրելի աշակերտս մեր զտէր Բարսեղ արքեպիսկոպոսն, որ եւ հրամայեցաք սմա շինել զեկեղեցի իմ հովարան*

---

[13] *Նույն տեղում, էջ 143:*

[14] *Տե՛ս* **Մաղալյան Ա.,** *Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2008, - 3, էջ 270]:*

[15] *Տե՛ս* **Մկրտումյան Լ.,** *Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցու օրոք (1653-1678) (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, - 1, էջ 88):*

[16] *Տե՛ս* **Բարխուտարեանց Մ.,** *Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 66:*

[17] **Մկրտումյան Լ.,** *Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցի կա-թողիկոսի օրոք (1653- 1678 թթ) (Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, № 1, էջ 96): Ավանդության համաձայն՝ գյուղի Փիփ անվանումը ծագում է Փեփրոնյա կույսի անունից, որը նահատակվել է այստեղ և ամփոփվել տեղի եկեղեցում: Գյուղը կոչվել է նաև Փիբ, Զազլիկ այժմ՝ Զեյլիկ: Գտնվում էր Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդման գավառում, Հյուսիսային Արցախում: Ներկայումս Ադրբեջանի Դաշքեսանի շրջանում է:*

[18] *Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 143:*

[19] *Տե՛ս* **Բարխուտարեանց Մ.,** *Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Թիֆլիս, 1901, էջ 170-174: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 164:*

Ամարասայ, զոր եւ շինեալ կատարեաց ըստ մերում հրամանի յաւուր տաւնի այլակերպութեանն Քրիստոսի. Եւ աւրհնեցաք զսուրբ տաճարս անուանելով զսա սուրբ Գրիգորիս՝ բերելով ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք երկրիս Վարանդու եւ Քոչիզու, զի եղիցի այս երկու աթոռս մի….»[20]:

Վ. Հարությունյանը հիշատակում է, որ այս եկեղեցու ճարտարապետական նկարագրի վրա ազդել է այն հանգամանքը, որ Հերհերը եղել է Ամարասի վանքի միաբանների ամառանոցը, Վարանդայի ու Քոչեզի վիճակների կենտրոնը[21]: Եկեղեցին դասվում է գմբեթավոր բազիլիկների շարքին: Պատերը արտաքուստ կառուցված են անմշակ քարերով:

Հնատիպ ոճով աչքի է ընկնում Խաչեն գավառի ***Առաջաձոր (Առջաձոր) գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին,*** *որը կառուցվել է 1668 թ[22]., Դավիթ քահանայի կողմից: Շինարարական աշխատանքներին օժանդակել է Յաղուբ բեկը, որն այդ ժամանակ գյուղի ավագն էր: Այդ մասին վկայում է եկեղեցու հարավային պատին արված արձանագրությունը. «Թվին 1668 թ., հայրապետութիւն Պետրոս կաթողիկոսին, գյուղիս տանուտէրութիւն Եաղուբ պէկին (բէգին), աղսակալութիւն (Աղսախխալի) Պահարին, ես՝ անարժան Դաւիթ էրեցս շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգոց մերոց. ով կարդաք, ողորմի ասէք մեղավորիս[23]«: Այս մասին գրում է նաև Ս. Ջալալյանը[24]:*

Հետաքրքրական է Ղ. Ալիշանի հիշատակությունը եկեղեցու դռան վրա ամրացված մի խաչքարի մասին, որի վրայի վիմագրությունից (1253 թ.) կարելի է ենթադրել, որ դեռևս XIII դ. կեսերից այդտեղ գոյություն է ունեցել մատուռ, որի հիմքերի վրա էլ կառուցվել է վերոնշյալ եկեղեցին. «ՉԲ թվին ես՝ Աբուսալի որդի Վաչես, կանգնեցրի զխաչս պարոն Թուրքին. ովքեր կկարդան, թող հիշեն հանուն Քրիստոսի[25]«:

Եկեղեցին նշանավոր է նաև իր հին ձեռագրերով: Ուշագրավ են հատկապես երկու ձեռագիր մատյանները՝ «Ավետարանը» և «Աստվածաշունչը»: Վերջինիս մասին հիշատակում է Ս. Ջալալյանցը. «Գտանք 'ի սոյն գեղջ զԱստուածաշունչ մի, յորոյ յիշատակարանս գրի, որ

---

[20] *Տե՛ս* **Լալայան Ե.,** *Վարանդայի տեղագրությունը (Ազգագրական հանդես, գիրք Բ, էջ 39-40):*

[21] *Տե՛ս* **Հարությունյան Վ.,** *Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992, էջ 401:*

[22] *Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 87:*

[23] *Նույն տեղում, էջ 89:*

[24] *Տե՛ս* **Ջալալեանց Ս.,** *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 240-241:*

[25] **Ալիշան Ղ.,** *նշվ. աշխ., էջ 74:*

ընդօրինակեցաք գիրքս այս ըստ Կեսարացւոյն օրինակաց, կային յարկեղս գրոց սրբոյն Պամփիլեայ իւրովք ձեռքով գրեալ....»[26]: Ջալալյանցը նշում է, որ սույն «Աստվածաշնչի» մոտ կար մի արձանագրություն, որտեղ ասվում է. «....Ես Եղիայ եպիսկոպոս առաջնորդ Գանձասարայ վկայ. Ես Յոհաննէս կաթողիկոս որդի Ջալալին, թոռն մեծ Աթաբէգի վկայ. Ես Աղաբաստի որդի Ջալալին վկայ. Ես Աթաբէգս որդի Ջալալին վկա. Ես Ուլուբէգս որդի Մէջլիսին թոռն մեծին Ջալալին, ով որ այս Սարհատիս դաւի անի, Աստուծոյ նահլաթ լինի[27]«:

Խանձք գյուղի Սբ. Ստեփանոս եկեղեցին *կառուցվել է 1673 թ.: Մուտքի ճակատաքարին փորագրված է հետևյալ արձանագրությունն. «Ի :ՌՃԻԲ: (1673) թուին ես Պետրոս կաթողիկոս Աղուանից ի գեղջէս Խանցկայ, հայրն իմ Մանկասար, մայրն Աղխանն և աւաք եղբայրն իմ Իշխանն և իւր որդիքն Ովանէսն, Պապաջանն և իւր թոռ Մանկասարն և տատ Խաթունն շինեցաք զեկեղեցիս յիշատակ մեզ և ննջեցելոց մերոց»[28]:*

Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի ջանքերով վերակառուցվեց նաև Վարանդայի եպիսկոպոսական կենտրոն Ամարասը[29]: Նրա աշակերտը՝ Բարսեղ եպիսկոպոսը, շարունակելով ուսուցչի շինարարական գործունեությունը՝ նորոգում է Ամարասը, այն շրջապատում պարիսպներով: Նրանց ծավալած շինարարության մասին խոսվում է 1664 թ. Ամարասում գրված «Հիշատակարանում»[30]: Պետրոս Խանձքեցու շինարարական գործունեության շնորհիվ երկրում զարկ տրվեց գիտակրթական կյանքին: Կաթողիկոսի պատվերով Արցախի եկեղեցիներում, վանքերում գրվել են մի շարք ձեռագիր աշխատություններ, որոնց մի մասը, ցավոք, չի պահպանվել:

XVII դ. երկրորդ կեսին կառուցվել են նաև ***Պտկաթաղ, Ղա-զանչի, Վարդաշեն, Կուսապատ գյուղերի*** *եկեղեցիները:*

Պտկաթաղի եկեղեցին *(ներկայումս՝ ԼՂՀ Հադրութի շրջանում) գտնվում է Ծակուռի և Թաղուտ գյուղերի միջև: Արձանագրություններից մեկի համաձայն՝ այն կառուցվել է 1670 թ. և պատկանում է թաղածածկ դահլիճ-եկեղեցիների տիպին[31]:*

---

[26] **Ջալալեանց Ս.,** *նշվ. աշխ., էջ 241:*

[27] *Նույն տեղում, էջ 244:*

[28] *Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 143: Տե՛ս նաև* **Ջալալեանց Ս.,** *նշվ. աշխ., էջ 343:*

[29] *Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 240, վավ. 132: Տե՛ս նաև* **Բարխուդարյան Մ.,** *Արցախ, էջ 74:* **Հասրաթյան Մ.,** *Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Ե., 1992, էջ 17:*

[30] **Ոսկեան Հ.,** *նշվ. աշխ., էջ 29:*

[31] **Հարությունյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 402:*

Ղազանչի գյուղի Սբ. Գևորգ եկեղեցու *մուտքի վրա փորագրված է. «Սուրբ Գէորգայ եկեղեցիս. թվ :ՌՃԻ: (1671)»[32]:*

Վարդաշեն (Միրզիկ[33]) գյուղի Սբ. Գաբրիել քառասյուն եկեղեցին *կառուցվել է 1674 թ: Այս մասին եկեղեցու կամարակալ քարի վրա կար արձանագրություն. «Արդեամբ Միրզիկայ սուրբ Գաբրիէլ եկեղեցիս շինեցաւ 1674 թ. ամի[34]«: Այն ունի եռանավ, թաղածածկ, բազիլիկ հորինվածք: Տարբեր ժամանակներում վերանորոգվել է: Գործել է մինչև 1928 թ. և Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների որոշմամբ փակվել: Ներկայումս եկեղեցին ու զանգակատունը, ինչպես նաև պատերի հայատառ արձանագրությունները հիմնականում պահպանվում են[35]:*

Կուսապատ[36] գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին *կառուցվել է 1686 թ.[37]: Այս մասին ուշագրավ հիշատակություն ունի Ս. Ջալալյանցը. «Է գիւղ բազմամարդ որ ունի զայգիս յոլովս, իսկ շրջապատ լերինքն յամարան տօթատանջ վշտագնեն զբնակիչսն, ’ի սմա է եկեղեցի սագաշէն կառուցեալ’ի վերայ չորից սեանց ’ի թուին Հայոց ՌՃԼԵ[38]«:*

1639-1700 թթ. կառույցներից իր պատմական նշանակությամբ աչքի է ընկնում ***Երից Մանկանց վանքի եկեղեցին:*** *Վանքը գտնվում է Ջրաբերդի մոտ (պատմական Արցախ նահանգի Մեծ Կուենք կամ Մեծ Կվենք գավառում[39]), Թրղի գետակի ձախ ափին[40] (ներկայումս՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում, Խոտորաշեն գյուղի մոտ, Տոնաշեն և Մեծ Շեն գյուղերի հարևանությամբ): Երից Մանկանց վանքը[41] եղել է Աղվանից հակաթոռ[42]*

---

[32] *Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 90:*

[33] *Գյուղը գտնվում էր պատմական Գարդմանքի Քարհատ քաղաքից 10 կմ դեպի արևելք, ներկայումս Ադրբեջանի տարածքում է:*

[34] *Տե՛ս* **Լալայան Ե.,** *Հայոց նշանավոր գյուղեր (Ազգագրական հանդես, գիրք Ե., էջ 316):*

[35] *http://gardmanq.do.am/blog/vardashen_mirzik_gyowghi_sowrb_gabriel_ekegheci/2014-01-31-20*

[36] *Ղ. Ալիշանը Կուսապատ գյուղը կոչում է Կասապատ կամ Քասաբադ: Այն տեղադրում է Մեծիրանք գավառում (ներկայիս Մարտակերտի շրջանում, տե՛ս* **Ալիշան Ղ.,** *նշվ. աշխ., էջ 70):*

[37] *Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 93:*

[38] *Տե՛ս* **Ջալալեանց Ս.,** *նշվ. աշխ., մասն Ա, Տփխիս, 1842, էջ 180:*

[39] *Տե՛ս Արարատ, Սբ. Էջմիածին, 1871, 8 (Ը), էջ 441, 1896, № 1 (Ա), էջ 44:*

[40] **Կարապետյան Ս.,** *XVII դ. վանական երկու համալիր Արցախում (ՊԲՀ, 1985, - 1, էջ 227):*

[41] *Ղ. Ալիշանի «Արցախ» աշխատությունում Երից Մանկանցը նշվում է նաև Դանիելի վանք անունով, որը աշխարհացույց քարտեզում գրված է՝ «Քիբերդի Վելի վանք»:*

[42] *Ջրաբերդ գավառի Մեծ Շեն գյուղի Սարգիս քահանայի որդի Սիմեոն եպիսկոպոսը 1691 թ. կառուցելով Երից Մանկանց վանքի եկեղեցին, իրեն հռչակում է կաթողիկոս: Այս հանգամանքը սկիզբ դրեց Գանձասարի դեմ ուղղած հակաաթոռությանը (մանրամասն տե՛ս Լ.Եռ, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ, Ե., 1973, էջ 116):*

կաթողիկոսների նստավայրը: Այն բաղկացած է մեկ եկեղեցուց, որն էլ կառուցվել է նվիրատվություններով, Աղվանից Սիմեոն կաթողիկոսի և նրա եղբոր՝ Իգնատիոսի կողմից, 1691 թ.: Այս մասին «Արարատ» ամսագիրը գրում է. «....Այս գաւառին վանքերէն երևելի է Երից Մանկանց ուխտն հռչակաւոր Մռաւու լերին բազկաց վերայ, Հայոց ՌՃԽ թուականին Աղուանից Սիմէօն Կաթողիկոսին և իւր եղբօր Իգնատիոս վարդապետին ձեռօք, ինչպես որ սորա եկեղեցւոյ արձանագրութիւններէն ևս յայտնի է զորս Սրբազան Սարգիս Արք Եպիսկոպոսն Հասան-Ջալալեանց....»[43]: Եկեղեցու արևմտյան մուտքի կիսակամար ճակատաքարի արձանագրությունը ևս փաստում է այդ մասին. «Ի ՌՃԽ (1691) թվիս, ի ժամանակս շահ Սուլէյմանին մեծի արքային Պարսից, ես Սիմեօն շնորհիւն Աստուծոյ կաթողիկոս Աղուանից շինեցի զեկեղեցիս ընդ հարազատ եղբարբն իմով Իգնատիոս վարդապետին որ եմք որդիք Սարգսի քահանայի մեծաշէնցւոյ յաղաւթս յիշեցէ՛ք որդիք նոր Սիօնի՝ի մտանելն և յելանելն դրանս տէրունի ամէն»[44]: Խ. Դաղյանը ևս եկեղեցու կառուցման թվականը նշում է 1691-ը[45]:

Եկեղեցու բեմի վերևի մասում եղած արձանագրությունում նշվել էր, որ եկեղեցում կային դպրատուն, բնակելի սենյակներ, որոնց մեծ մասն ավերվել է (օտար զավթիչների ասպատակությունների հետևանքով): Բնակելի սենյակների տակ եղել են նկուղներ, որոնք ծառայել են որպես պահեստներ, գուցե և թաքստոցներ: Ճարտարապետը Ուստա Սարգիսն էր, որի մասին հավաստում է եկեղեցու հյուսիսային պատի արձանագրությունը. «Շինող և վարպետ եկեղեցւոյս ուստայ Սարգիսն յիշեցէք՝ի Քրիստոս»[46]: Ըստ Ջալալյանցի՝ եկեղեցին կառուցվել է ավելի վաղ՝ 1664 թ. (ՌՃԺԳ)[47]: Այս թվականը նշում է նաև Շ. Մկրտչյանը[48]: Ջալալյանցի տեսակետը Ղևոնդ Ալիշանը բացահայտ սխալ է համարում և կարծում է, որ դա հակասում է արձանագրությանը, քանզի այդ ժամանակ Սիմեոնը կաթողիկոս չի եղել: Ղ. Ալիշանը նաև նշում է. «Իսկ եթե ՌՃԾԳ (1704) թվականը կարդանք, այն ևս անհնար է, որովհետև այն ժամանակ վախճանված էր Սիմեոնը»[49]:

---

[43] *Արարատ, 1871, 8 (Ը), էջ 442:*

[44] *Այս արձանագրությունից պարզ երևում է, որ Սիմեոն կաթողիկոսը եղել է Զրաբերդ գավառի Մեծ Շեն գյուղից (Դիվան հայ վիմագրության, էջ 96): Այս մասին տե՛ս նաև* **Ջալալեանց Ս.,** *նշվ. աշխ., մասն Ա, էջ 178:* **Ալիշան Ղ.,** *նշվ. աշխ., էջ 41-42:* **Կարապետյան Ս.,** *XVII դարի վանական երկու համալիր Արցախում (ՊԲՀ, 1985, թ. 1, էջ 228-229):*

[45] **Դաղյան Խ.,** *Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2007, էջ 35:*

[46] **Ջալալեանց Ս.,** *նշվ. աշխ., մասն Ա, էջ 179:*

[47] *Նույն տեղում:*

[48] **Մկրտչյան Շ.,** *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Ե., 1980, էջ 53:*

[49] **Ալիշան Ղ.,** *նշվ. աշխ., էջ 42:*

Մենք համամիտ ենք Ղ. Ալիշանի տեսակետին, քանի որ, ըստ եկեղեցու արձանագրության, այն կառուցել է Աղվանից կաթողիկոս Սիմեոնը՝ Սիմեոն Դ Խոտորաշենցին (1675-1701 թթ.)[50]:

Ուշագրավ է նաև եկեղեցու արձանագրություններից մեկում Երից Մանկանց վանքի վերաբերյալ հետևյալ հիշատակումը. «Մեր աշխատանքը ավարտի հասցրինք՝ աստվածասերների ու ողորմածների միջոցով ու օգնությամբ. սուրբ Դանիել մարգարեի և երեք սուրբ Մանուկների պատվական նշխարքները, որոնք դրված են այստեղ, մեծամեծ հրաշագործություններ են կատարում: Այստեղ այն կառուցվեց մեր փրկության, մեր բազում մեղքերի թողության, մեր հոգևոր ու մարմնավոր ծնողների, ինչպես նաև բոլոր աշխատողների համար. մեզ և վանքի միաբաններին հիշեցե՛ք ձեր սուրբ աղոթքների մեջ»[51]:

Երից Մանկանց վանքն ունի երկու թաղակապ խուց, միաբանների համար նախատեսած քարաշեն սենյակներ[52]:

XVII դ. 90-ական թվականների վերջերին Արցախի եկեղեցիներից նշանավոր է ***Ներքին Շենի Սբ. Աստվածածին եկեղեցին,*** *որն կառուցվել է 1697 թ. (ՌՃԽԶ): Ինչպես նշում է Ե. Լալայանը, եկեղեցին բազմիցս որպես ապաստարան է ծառայել գյուղացիների համար, քանի որ պատերի վրա նկատելի են բազմաթիվ գնդակների հետքեր[53]:*

Այսպիսով, վերոնշյալ ժամանակաշրջանի եկեղեցաշինության մասին տվյալները փաստում են Արցախի մշակութային արժեքավոր կոթողների առկայությունը: Ցավոք, այդ եկեղեցիների որոշ մասը ներկայումս խոնարհված է, հատկապես՝ Արցախի հյուսիսային հատվածի եկեղեցիները, որոնք հայկական այլ մշակութային արժեքների հետ գտնվում են Ադրբեջանի Հանրապետության տարածքում:

---

[50] *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ե., 2002, էջ 44:*

[51] **Ալիշան Ղ.,** *նշվ. աշխ., էջ 43:*

[52] *Տե՛ս Արարատ, Սբ. Էջմիածին, 1896, - 1 (Ա), էջ 44:*

[53] **Լալայան Ե.,** *Հայոց նշանավոր գյուղեր, էջ 330:*

СТРОИТЕЛЬСТВО ЦЕРКВЕЙ В АРЦАХЕ В 1639-1700 ГГ.

АРУТЮНЯН М. Г.

Резюме

В XVII-XVIII вв. Армения переживала социально-экономический кризис, однако и в этих сложных условиях в 1639- 1700 гг. в восточных частях Армении были восстановлены и построены великолепные архитектурные памятники. Монастырские комплексы занимали важное место в архитектуре XVII-XVIII столетий.

Подчеркивая важность роли церкви в сохранении национальной идентичности, видные представители армянской культуры продолжали восстанавливать и возводить церкви также в Арцахе: к их числу относятся церкви Гюлистан, Драхтик, Тодан, Хачкап, Аветараноц, Хачмас, Шош, Чартар, Гергер, Арачадзор (Арчадзор), Хандзк, Птkatах, Газанчи, Вардашен, Кусапат, Неркин Шен, церкви монастырского комплекса Чарек, Ериц Манканц. Некоторые из этих церквей находятся в полуразрушенном состоянии, особенно церкви северных районов Арцаха, входящих в территорию современного Азербайджана.

CONSTRUCTION OF THE CHURCH IN ARTSAKH IN 1639 TO 1700

M. HARUTYUNYAN

Abstract

In XVII-XVIII centuries economic and social crisis was in Armenia. But in these difficult conditions, in 1639-1700 magnificent architectural monuments were rebuilt and built in the eastern parts of Armenia. Monastic complexes occupied an important place in the architecture of the XVII-XVIII centuries.

Highlighting the role of the church in the preservation process and national identity, prominent representatives of the Armenian culture continued to rebuild and build magnificent churches in Artsakh. Among those, churches of Gulustan, Drakhtik, Todan, Khachakap, Avetaranots, Khachmas, Shosh, Chartar, Gerger, Arajadzor (Arjadzor), Khandzk, Ptkatagh, Ghazanchi, Vardashen, Kusapat, Nerqin Shen, Charek Monastery, Yeritsmankants Monastery were famous. Some of them are dilapidated, especially churches of the northern regions of Artsakh, which with other cultural values are in borders of Azerbaijan.